ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

# ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

# JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր*
*Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Աիմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Քնարիկ Միրզոյան*
ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85 ........ 7-9

**Արաբագիտություն**

*Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*
«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ) ........ 10-21

*Մերի Չփլախյան*
«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ՂՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ........ 22-29

*Հարություն Մաթևոսյան*
ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ) ........ 30-39

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ ........ 40-46

*Հասմիկ Երիցյան*
ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ). ........ 47-54

**Թյուրքագիտություն**

*Վարուժան Գեղամյան*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ. ........ 55-71

*Մարիամ Մելքոնյան*
ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ 72-86

*Ռաֆիկ Խաչատրյան*
1974 Թ.-Ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 87-98

*Գառնիկ Դավթյան*
ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 99-105

*Թամարա Աղամալյան*
ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.) 106-117

**Իրանագիտություն**

*Լիանա Պետրոսյան*
ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 118-123

*Անի Նահապետյան*
ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ 124-140

*Նարե Գևորգյան*
ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 141-152

*Յասեր Քարամզադե Հաֆթխանի*
ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 153-160

## CONTENT

*Knarik Mirzoyan*
Gurgen Melikyan - 85 ........ 7-16

## Arabic Studies

*Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim*
“PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO) ........ 10-21

*Meri Chplakhyan*
«AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT» ........ 22-29

*Harutyun Matevosyan*
US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA) ........ 30-39

*Mohammed Haj Ibrahim*
EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11 ........ 40-46

*Hasmik Yeritsyan*
MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES) ........ 47-54

## Turkic Studies

*Varujan Geghamyan*
MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021 ........ 55-71

*Mariam Melkonyan*
DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV ........ 72-86

*Rafik Khachatryan*
THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS ........ 87-98

*Garnik Davtyan*
AZERBAIJANI ELECTION OVERVIEW ........ 99-105

*Tamara Aghamalyan*
PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS ........ 106-117

**Iranian Studies**

*Liana Petrosyan*
THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD ........ 118-123

*Ani Nahapetyan*
JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE" ........ 124-140

*Nare Gevorgyan*
THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN ........ 141-152

*Yaser Karamzadeh Haftkhani*
AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY ........ 153-160

## ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85

Տարիների 85-ամյա բարձունքից, մտավոր սերմնացանի արգասավոր վաստակով, գիտությանը, առաջընթացին և լույսին աներկբա նվիրվելու ասպետականությամբ և իմաստության քրմական ժպիտով է այսօր վերստին կաղնիանում Գուրգեն Մելիքյանը: Նրա հեղինակությունը, գիտնականի բացառիկ տեսակը, մանկավարժական և հասարակական գործունեությունը վաղուց հայտնի են Հայաստանում և Սփյուռքում, իսկ մեզ՝ նրա հետ ամեն օր հաղորդակցվողներիս, հայտնի են նրա անդադրում մարդասիրական էությունը, ընկերասիրության բարձրագույն կենսակերպը և դասախոսի անմնացորդ նվիրվածությունը:

Գուրգեն Մելիքյանը ծնվել է 1936թ. Իրանի Աբադան քաղաքում: Մանկության տարիների գունեղ պատկերների թևածումները և Իրանի արևի ցոլքերը անդառնալիորեն մնացին նրա աչքերում: Գուրգեն Մելիքյանը երբեք չդավաճանեց իր երազներին, և երազներն էլ չլքեցին նրան, ավելին՝ մարմին առան և առկայացան նաիրական այն սրբազան ծիրի մեջ, որ կոչվում է հայրենիք ու Հայաստան աշխարհ: Այդ աշխարհի անխաթարության կրողն ու մարտիկն է Գուրգեն Մելիքյանը:

Գ. Մելիքյանի նախնիները զավակներն էին նշանավոր մի գերդաստանի, որ հայրենասիրական բազում այլ գործերի հետ հիմնադրել են վերին Արտաշատավանը, ապա հետագայում տեղափոխվել Պարսկաստան: Հայրը՝ Վրեժ Մելիքյանը, պատկառազդու և հարգարժան այր էր, մայրը՝ Մարթա Մարտին, բնիկ սպահանցի, զարգացած ու հայրենասեր օրիորդ, որ ուսանել էր Հնդկաստանի Մարդասիրաց ճեմարանում: Այս գեղեցիկ զուգորդության ներդաշնակությունից է բխում Գուրգեն Մելիքյան անհատը, նրա բյուրեղյա ազնվությունն ու վճիտ հայրենասիրությունը:

Գ. Մելիքյանը իր սկզբնական կրթությունը ստացել է Թեհրանի Քուշեշ-Մարիամյան դպրոցում, ուսումը շարունակել է Աբադանի Աղաբ դպրոցում, ապա ընդունվել և ավարտել է ծննդավայրի Ռազի 12-ամյա բնագիտական թեքումով պարսկական դպրոցը:

1958 թ. իրականանում է նախախնամության մի կարևոր դրվագ: Մելիքյանների ընտանիքը վերադառնում է հայրենիք: Գուրգեն Մելիքյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժնի երկրորդ կուրս, բարձր առաջադիմության շնորհիվ դառնում է

անվանական կրթաթոշակառու: Գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ 1964 թ. նա ընդունվում է ասպիրանտուրա, իսկ 1992-ից գլխավորում է Արևելագիտության փակուլտետը:

Ճանաչված իրանագետի գրչի արգասիքն են բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնք վերաբերում են ժամանակակից պարսկերենի քերականական համակարգին, բառերի ստուգաբանությանը, բարբառագիտության հիմնահարցերին: Դրանցից շատերը տպագրվել են Հայաստանի սահմաններից դուրս: Գուրգեն Մելիքյանի եռանդուն ջանքերի շնորհիվ համալսարանի՝ նրա ղեկավարած մասնաճյուղն այսօր հանրապետության կրթական առաջատար ստորաբաժանումներից է և կարևորվում է իր ռազմավարական նշանակությամբ:

Գ. Մելիքյանը մեծ ներդրում ունի փակուլտետում աշխատանքային ներդաշնակ, ստեղծագործ փոխհարաբերությունների և գիտականության չափանիշների պահպանման գործում: Համալսարանական ավանդույթներն են փոխանցվում ուսանողներին, և նրանք աշխատում են բարձր պահել համալսարանականի պարտավորեցնող կոչումը:

Գուրգեն Մելիքյանի գործունեության մասին ինչ էլ ասենք, քիչ է լինելու: Նրա հախուռն բնավորությունը, անհանգիստ հոգին անդադար նոր ուղիներ է փնտրում պատանեկության իր երազն իրականացնելու համար: Ծառատունկ, ավերված եկեղեցիների վերականգնում, բարեգործություններ աղետի գոտում, բազմազավակ ընտանիքներին հատկացվող օգնություն և ուրիշ մարդասիրական ձեռնարկներ, և բոլորը՝ իրական, շոշափելի:

Արցախյան գոյամարտի առաջին իսկ օրերից Գուրգեն Մելիքյանը համազգային զարթոնքի առաջամարտիկներից է, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի գնդապետ: Եվ արդեն 20 տարի է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին հիմնադրամը» մշտական օգնություն է ցուցաբերում արցախցիներին, վճարում սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձերը:

ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշան(1999թ.), «Մովսես Խորենացի» (1999թ.), «Գարեգին Նժդեհ» (2006թ.), «Դրաստամատ Կանայան» (2009թ.) մեդալներ, «Մեսրոպ Մաշտոց» (2011թ.) շքանշան, ՀՀ վաստակավոր մանկավարժ (2012 թ.), ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալ (2008թ.), ՀՀ ԱԳՆ «Պատվո մեդալ» (2017թ.).... Բազմաթիվ կոչումներ և պարգևներ ունեցող այս մարդու առաքինություններից մեկն էլ համեստությունն է:

Աստվածաշունչը ասում է. «Սակավ են ընտրյալք»: Հիրավի, Գուրգեն Մելիքյանը այն սակավ ընտրյալներից է, որի մարդկային էությունը և հավատն առ հայրենիք ոգևորում է շատերին:

Սրտանց շնորհավորում ենք Ձեր հոբելյանը, մեր սիրելի Գուրգեն Մելիքյան: Երջանիկ ենք, որ Ձեր ժամանակակիցն ենք և աշակերտը:

***Քնարիկ Միրզոյան***
***ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ***